Արեստակես Ս. Սիմավորյան[1]

BRICS+. ՆՈՐ ԱՇԽԱՐՀԱՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՈ՞ՒՄ ԹՈՒՐՔԻԱՅԻ ՀԱՄԱՐ[2]

2024 թ. սեպտեմբերի 3-ին «Արդարություն և զարգացում» կուսակցության ներկայացուցիչ Օմեր Չելիքը հայտարարեց, որ Թուրքիան դիմել է BRICS+-ին անդամակցելու հայտով: Քանի որ Ռուսաստանը ներկայումս BRICS+-ի ռոտացիոն նախագահն է, հայտարությունից հետո ՌԴ նախագահի արտաքին քաղաքականության հարցերով խորհրդական Յուրի Ուշակովը հաստատեց, որ Թուրքիան դիմել է BRICS-ին լիիրավ անդամակցելու համար:

Ինչպես հայտնի է, այս միջազգային կազմակերպությունը հիմնադրվեց 2006 թ.՝ Բրազիլիայի, Ռուսաստանի, Հնդկաստանի և Չինաստանի կողմից «BRIC» հապավումով, որն իր անունը ստացել էր այս երկրների անգլերեն անունների սկզբնատառերից: 2011 թ. Հարավաֆրիկյան Հանրապետության համալրմամբ կազմակերպության անվանումը դարձավ «BRICS»: 2024 թ. հունվարի 1-ին BRICS-ին միացան նաև Եգիպտոսը, Եթովպիան, Իրանը և ԱՄԷ-ն: Դեռևս առկախված վիճակում է Սաուդյան Արաբիայի անդամակցության հարցը, թեև աշխարհի բազմաթիվ լրատվականներ շտապել են նրան ներկայացնել որպես կազմակերպության անդամ: Սաուդյան Արաբիան չմիացավ BRICS-ին 2024 թ. սկզբին, ինչպես որ նախատեսված էր, և այս տարվա ապրիլի դրությամբ հարցը դեռ քննարկման փուլում էր[3]: Կազմակերպությանը միանալու հրավիրված մեկ այլ երկիր՝ Արգենտինան, հետ վերցրեց իր դիմումը Խավիեր Միլեյի նախագահ ընտրվելուց հետո:

---

[1] Արևելագետ, թուրքագետ: 2008–2019 թթ. աշխատել է ՀՀ կառավարությանն առընթեր «Նորավանք» գիտակրթական հիմնադրամում որպես Հայագիտական կենտրոնի ղեկավար, 2014 - 2021 թթ.՝ ՀՀ պետական կառավարման ակադեմիայի «Տարածաշրջանային հետազոտությունների կենտրոն»-ի գիտաշխատող: 2019 - 2021 թթ. աշխատել է ՀՀ վարչապետի աշխատակազմի «Հանրային կապերի և տեղեկատվության կենտրոն» ՊՈԱԿ-ի «Վերլուծական ծառայության» բաժնում որպես ավագ փորձագետ: 2021–2022 թթ. «Հայաստանի ազգային արխիվ» ՊՈԱԿ-ի «Գիտահետազոտական աշխատանքների և միջազգային կապերի բաժնի» գլխավոր արխիվագետ: 100-ից ավելի գիտավերլուծական հոդվածների և 12 կոլեկտիվ մենագրության հեղինակ է:

[2] Հոդվածը խմբագրություն է հանձնվել՝ 28.09.2024 թ.:

[3] Saudi MBS on BRICS leaders calling him to abandon U.S. dollar in oil transactions. (26.04.2024), https://www.tacticalreport.com/daily/62696-saudi-mbs-on-brics-leaders-calling-him-to-abandon-us-dollar-in-oil-transactions (բեռնման օրը՝ 10.09.2024).

Ինչպես տեսնում ենք, BRICS+-ի երկրները ներառում են խոշոր համաշխարհային տերություններ, ինչպիսիք են Չինաստանն ու ՌԴ-ն, կամ իրենց մայրցամաքներում կարևոր նշանակություն ունեցող պետությունները՝ Բրազիլիան, Հարավաֆրիկյան Հանրապետությունը և մյուսները: Համաշխարհային բանկի տվյալների համաձայն՝ BRICS+-ի մասնաբաժինը համաշխարհային ՀՆԱ-ում գնողունակության համարժեքությամբ՝ 2023 թ. կազմել է 35,7%, մինչդեռ G7 երկրների մասնաբաժինը նվազել է՝ հասնելով 29%-ի: Հավելենք նաև, որ BRICS+-ի անդամ–երկրների բնակիչների թիվը կազմում է երկրագնդի բնակչության 42%-ը՝ 3 մլրդ-ից ավելի մարդ[4]:

Թեև այս պահին կազմակերպության լիիրավ անդամ են 9 պետություն, սակայն 2023 թ. օգոստոսին հայտնի դարձավ, որ BRICS+-ին միանալու պատրաստակամություն է հայտնել ավելի քան 40 երկիր, որոնց թվում՝ Ալժիրը, Բոլիվիան, Ինդոնեզիան, Կուբան, Կոնգոյի Դեմոկրատական Հանրապետությունը, Գաբոնը, Նիգերիան, Ղազախստանը և այլն[5]:

2024 թ. անդամակցելու հայտ են ներկայացրել Մալայզիան, Թաիլանդը և ԱԴՀ-ը, որից հետո, ի վերջո՝ Թուրքիան: Հետևաբար, այս ամենը նշանակում է, որ BRICS+-ն առաջիկա ամիսներին և նաև հետագա տարիներին ընդլայնվելու զգալի ներուժ ունի: Այլ պետությունների անդամակցության հարցը, անշուշտ, կքննարկվի 2024 թ. հոկտեմբերի 22–24-ին Կազանում սպասվող BRICS+-ի հերթական գագաթնաժողովին, որի նախագահությունն այս տարի ստանձնել է ՌԴ-ն:

ԻՆՉՈ՞Ւ Է ԹՈՒՐՔԻԱՆ ՑԱՆԿԱՆՈՒՄ ՄԻԱՆԱԼ BRICS+-ԻՆ

Փաստացի, BRICS+-ը, որի կազմում ներկայացված են աշխարհի ամենաարագ զարգացող տնտեսություններ ունեցող մի քանի պետություններ, ձևավորել է իբրև այլընտրանքային հարթակ ի հակակշիռ Արևմուտքի այնպիսի ավանդական հաստատությունների, ինչպիսիք են ՆԱՏՕ-ն, ԵՄ-ն և ԱՄՀ-ն (Արժույթի միջազգային հիմնադրամ), Համաշխարհային բանկը: Հաշվի առնելով վերն ասվածը՝ այս ձևավորվող «բլոկի» հետ համահունչ քաղաքականություն իրականացնելու պարագայում Անկարայի համար կարող են թե հնարավորությունների նոր պատուհաններ բացվել և թե ի հայտ գալ նոր մարտահրավերներ:

[4] Доля БРИКС в мировом ВВП достигла рекордных 35,7%. (03.07.2024). https://rg.ru/2024/07/03/dolia-briks-v-mirovom-vvp-dostigla-rekordnyh-357.html (բեռնման օրը՝ 10.09.2024).

[5] What is BRICS, which countries want to join and why? (22.08.2023). https://www.reuters.com/world/what-is-brics-who-are-its-members-2023-08-21/ (բեռնման օրը՝ 10.09.2024).

Ուստի, մինչ Անկարան պաշտոնական մակարդակով չի մեկնաբանում, թե BRICS+-ին միանալը ինչ նոր հնարավորություններ և ռիսկեր է պարունակում իր մեջ, այդ երկրի փորձագիտական շրջանակներում լայնորեն քննարկվում է այս հարցը: Ընդ որում, միանալ-չմիանալու հարցով պայմանավորված փորձագիտական դաշտը հայտնվել է երկփեղկված վիճակում, որի արդյունքում ձևավորվել են հարցի հետ կապված «դեմ» և «կողմ» խմբեր: Ըստ միանալուն կողմնակիցների՝ «*խորը ճգնաժամի մեջ գտնվող Թուրքիայի տնտեսությունն այդպիսով կարող է նոր շունչ ստանալ*», մինչդեռ հակառակ ճամբարի կարծիքով «*արտաքին աշխարհի հետ և, մասնավորապես, արևմտյան գործընկերների հետ հարաբերություններում առաջանալու են նոր ճգնաժամեր*»: Քննարկումները շարունակվում են առ այսօր:

Անկարայի անդամակցության հիմնական պատճառն, ըստ պաշտոնական մեկնաբանությունների, տնտեսական է: Նկատենք, որ Անկարան BRICS+-ի երկրների հետ բանակցություններ էր սկսել դեռևս 2024 թ. հունիսին: Դիտարկելով այս կազմակերպությունը որպես տնտեսական համագործակցության զարգացմանն ուղղված այլընտրանքային հարթակ՝ *Haberturk* հեռուստաալիքի եթերում ԹՀ ԱԳՆ ղեկավար Հաքան Ֆիդանը մասնավորապես հայտարարել էր. «*Մեր բանակցությունները BRICS-ի անդամ-երկրների հետ շարունակվում են: Մենք փնտրում ենք մեր շահերը, ուշադիր հետևում ենք այլընտրանքային տնտեսական հարթակներին: BRICS-ի առանձնահատկությունն այն է, որ կազմակերպության անդամներն են Ռուսաստանը և Չինաստանը: Ի տարբերություն G7-ի, որտեղ երկրները հավաքվում են քաղաքական նկատառումներով, BRICS-ը, առաջին հերթին, տնտեսական հարթակ է, մենք փորձում ենք լավ հարաբերություններ պահպանել BRICS-ի անդամ-երկրների հետ: BRICS-ը՝ ԵՄ-ի համեմատ ներառում է բոլոր քաղաքակրթություններն ու ռասաները: Եթե այն կարողանա մի քիչ ավելի ինստիտուցիոնալ դառնալ, լուրջ օգուտներ կբերի*»[6]: Ֆիդանը նաև նշել էր, որ ՆԱՏՕ-ի հետ իրենք ունեն ռազմական դաշինք, սակայն ԵՄ-ի հետ տնտեսական դաշինք չունեն, ուստի շարունակելու են իրենց որոնումները՝ դիտարկելով այդ և մյուս տնտեսական նշանակության հարթակները որպես միմյանց փոխլրացնող, այլ ոչ թե այլընտրանք:

Տպավորություն է ստեղծվում, որ ԵՄ-ին միանալու հարցում եղած առաջընթացի բացակայութունն է Անկարային դրդում անդամակցել BRICS+-ին:

[6] Dışişleri Bakanı Hakan Fidan'dan Habertürk'e açıklamalar (24.06.2024). https://www.haberturk.com/disisleri-bakani-hakan-fidan-dan-haberturk-e-aciklamalar-3697539 (բեռնման օրը՝ 10.09.2024).

Սա հաշվի առնելով՝ փորձագետները կարծում են, որ դեռ պետք է պարզել «*Արդյո՞ք Թուրքիայի շահն իրատեսական է, թե՞, պարզապես, սակարկության առարկա է, որն օգտագործվում է ԵՄ-ին՝ նրա անդամակցության շուրջ բանակցությունները վերսկսելու համար*»[7]:

Մյուս կողմից՝ մինչ ՌԴ-ն հավանություն է տալիս Թուրքիայի անդամակցությանը, ԱՄՆ-ը և մյուս դաշնակիցները մտահոգություն են հայտնել արտաքին քաղաքականության մեջ Անկարայի հնարավոր փոփոխության վերաբերյալ: Մասնավորապես, Թուրքիայում ԱՄՆ-ի դեսպան Ջեֆ Ֆլեյքն ասել է, թե հույս ունի, որ Թուրքիան չի միանա BRICS+-ին՝ «*Կարծում եմ, որ նրանք գիտակցում են, որ Ռուսաստանի տնտեսությունը վերածվում է պատերազմի ժամանակաշրջանի տնտեսության: Այնտեղ ապագա չկա, հատկապես Արևմուտքի կողմից կիրառված պատժամիջոցների հետ կապված*»: Վերջինս նաև նշել էր, որ Վաշինգտոնն աշխատում է Անկարայի հետ՝ մեղմելու իր էներգետիկ կախվածությունը ՌԴ-ից[8]:

Փորձագետները նշում են, որ Թուրքիայի ռազմավարական դիրքը՝ Եվրոպայի, Հյուսիսային Աֆրիկայի, Ասիայի և Մերձավոր Արևելքի կրիտիկական խաչմերուկում գտնվելը, կավելացնի BRICS+-ի աշխարհաքաղաքական նշանակությունը և կամրապնդի դրա ազդեցությունն այս տարածաշրջաններում: Ինչպես նշեցինք, BRICS+-ին միանալու Անկարայի առաջնային դրդապատճառներից մեկը տնտեսության դիվերսիֆիկացումն է: Ըստ այդմ, ակնկալվում է, որ Թուրքիայի հնարավոր անդամակցությամբ միության շուկայի չափն ու առևտրի ծավալը կընդլայնվի և նոր հնարավորություններ կստեղծի անդամ–երկրների միջև ներդրումների, առևտրային և տնտեսական համագործակցության համար[9]:

Անկախ այս կանխատեսումներից, դեռ վաղ է ասել, որ Անկարայի անդամակցությունը դրական ազդեցություն կարող է թողնել Թուրքիայի տնտեսության վրա: Այն պարզ պատճառով, որ կազմակերպությունը դեռևս չի մշակել այնպիսի գործիքներ, ինչպիսիք են՝ ընդհանուր արժույթը, մաքսային

[7] Monica Johnson. Why Nations Are Rushing to Join BRICS+? (12.09.2024), https://infobrics.org/post/42200/ (բեռնման օրը՝ 14.09.2024).

[8] US envoy believes Türkiye's place is 'in the West' amid BRICS move. (12.06.2024), https://www.dailysabah.com/politics/diplomacy/us-envoy-believes-turkiyes-place-is-in-the-west-amid-brics-move (բեռնման օրը՝ 14.09.2024).

[9] Murat Yeşiltaş. Türkiye'nin BRICS Üyeliği: Fırsat mı Risk mi? (07.09.2024), https://www.setav.org/turkiyenin-brics-uyeligi-firsat-mi-risk-mi (բեռնման օրը՝ 14.09.2024).

միությունը և ազատ առևտրի համաձայնագրերը: Թեև կազմակերպությունը գտնվում է «էվոլյուցիոն» փուլում, այն, այնուամենայնիվ, դեռ ունի թերի կողմեր, որոնք առաջին հայացքից էլ տեսանելի են և կարճաժամկետ հեռանկարում դժվար լուծելի: Կարծում ենք, Անկարայի՝ կազմակերպության հետ հարաբերությունների կիզակետում առկա է առանցքային երկու կետ:

Առաջինը՝ Շանհայում BRICS-ի հովանու ներքո գործում է կառույցի ամենակարևոր հաստատությունը՝ Նոր Զարգացման Բանկը, որի միջոցով կազմակերպությունը վարկեր է տրամադրում անդամ-երկրներում իրականացվող նախագծերին: Անկարայում հավանաբար կարծում են, որ անդամակցության դեպքում կարող են օգուտներ քաղել՝ օգտվելով բանկի միջոցով իրականացվող այլընտրանքային ֆինանսավորումից: Բանկը կարող է ֆինանսավորում հատկացնել Թուրքիայի տնտեսության համար նշանակություն ունեցող այնպիսի ոլորտների, ինչպիսիք են՝ էներգետիկան (այդ թվում՝ վերականգնվող էներգետիկան), տրանսպորտային լոգիստիկան (ինչպես օրինակ՝ «Ստամբուլի ջրանցք» բազմամիլիարդանոց հավակնոտ նախագիծը) և այլն: Չմոռանանք, որ BRICS+-ի անդամ Չինաստանը հայտնի է նաև իր զգալի ներդրումներով, որոնք կյանքի են կոչվում ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված գլոբալ ռազմավարության՝ «Գոտի և ճանապարհ նախաձեռնության» (BRI) շրջանակներում:

Երկրորդը՝ BRICS-ը նպատակ ունի նվազեցնել դոլարի գերակայությունը՝ օգտագործելով տեղական արժույթները միջպետական առևտրի համար: Ինչպես հայտնի է, վերջին տարիներին Թուրքիան ձգտում է առևտուր անել տեղական արժույթներով, հատկապես այն երկրների հետ, որոնց հետ ունի լայն առևտրային հարաբերություններ, ինչպիսիք են ՌԴ-ն, ԻԻՀ-ն և ՉԺՀ-ն: Հենց այս փաստն է նաև, որն, ըստ Հաքան Ֆիդանի, գրավել է նրանց ուշադրությունը:

BRICS-ԻՆ ԹՈՒՐՔԻԱՅԻ ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹՅԱՆ ԽՈՉԸՆԴՈՏՆԵՐՆ ՈՒ ՀԱԿԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ. ՈՐՈՇ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ

Չնայած Անկարայի՝ BRICS+-ին անդամակցելու ձգտմանը, այնուամենայնիվ, նախքան մուտքն այս ձևավորվող դաշինք ԹՀ-ն կարող է բախվել որոշակի խոչընդոտների: Ամենակարևոր աշխարհաքաղաքական խոչընդոտը՝ Թուրքիայի անդամակցությունն է ՆԱՏՕ-ին: Ուստի վերջինիս վաղեմի դաշնակից և արևմտյան դաշինքի առանցքային ռազմական խաղացող Թուրքիայի ընդգրկումը BRICS+-ում խնդրահարույց է ինչպես Թուրքիայի, այնպես էլ BRICS+-ի գործող անդամների՝ հատկապես ՌԴ և Չինաստանի համար: Գլխավոր հարցն

այն է, թե ինչ չափով են ՌԴ-ն և Չինաստանը կամ, նույնիսկ, Հնդկաստանը աջակցում Թուրքիայի անդամակցելուն: Դատելով ռուսական և չինական[10] տրամադրություններից, մասնավորապես, տնտեսական տեսանկյունից կարծես թե դեմ չեն Անկարայի անդամակցությանը: Մինչդեռ աշխարհաքաղաքական առումով, հատկապես ՆԱՏՕ-ի գործոնով պայմանավորված, BRICS+-ում որոշում կայացնող գլխավոր խաղացողների՝ ՌԴ-ի ու Չինաստանի, ինչպես նաև դաշինքի մյուս անդամների միջև, ամենայն հավանականությամբ, կարող են առաջանալ տարաձայնություններ:

Միացյալ Նահանգները և Եվրամիությունը հավանաբար կդիտարկեն Թուրքիայի ընդգրկումը BRICS+-ում որպես «*ռազմավարական տեղաշարժ*», որը կարող է այդ երկիրը հեռացնել Արևմուտքից: Ինչպես հայտնի է, ռուսական S-400 հրթիռային համակարգերի ձեռքբերումից հետո Անկարան ԱՄՆ-ի կողմից ենթարկվեց պատժամիջոցների, լարվեցին հարաբերությունները նաև ՆԱՏՕ-ի դաշնակիցների հետ: BRICS+-ին ուղղված Անկարայի այս քայլը կարող է էլ ավելի խորացնել լարվածությունը: Մասնավորապես, արևմտյան երկրները հնարավոր է դիվանագիտական ճնշում բանեցնեն Անկարայի վրա, ներառյալ՝ գործի դնեն տնտեսական նոր պատժամիջոցներ կամ համագործակցության որոշակի սահմանափակումներ (օրինակ՝ պաշտպանական գնումների և ռազմական համագործակցության ոլորտներում), հատկապես, եթե այդ քայլով Թուրքիան ավելի սերտ համագործակցություն ձևավորի Ռուսաստանի կամ Չինաստանի հետ՝ ի հեճուկս Արևմուտքի շահերին: Միաժամանակ, դա նաև կդրդի արևմտյան երկրներին ամբողջական խզումից խուսափելու համար ուղիներ որոնել Անկարայի հետ հարաբերությունները պահպանելու համար:

Մյուս կողմից՝ Անկարայի կապերն Արևմուտքի հետ խորապես արմատավորված են, հատկապես՝ պաշտպանական-ռազմական, ֆինանսատնտեսական և տեխնոլոգիական ոլորտներում: Հետևաբար, BRICS+-ի ուղղությամբ շրջադարձը կպահանջի նաև հարաբերությունների վերանայում, ինչը կարող է դժվար լինել՝ հաշվի առնելով առևտրաշրջանառությունը ԵՄ-ի հետ, ինչպես նաև ֆինանսական և տեխնոլոգիական տեսանկյունից գործընկերային հարաբերությունների խիստ անհրաժեշտությունը: Այնպես որ, Թուրքիայի պոտենցիալ ընդգրկումը, ինչպես նաև դրա բացասական և դրական հետևանքները՝ դեռևս հեռու են ավելի պարզ լինելուց ինչպես թուրքական, այնպես էլ մյուս կողմերի համար:

[10] Ընդհանրապես, Չինաստանը, որպես որ BRICS+-ի ամենամեծ տնտեսական և քաղաքական կշիռ ունեցող երկիր, միշտ զգուշավոր է վերաբերվել կազմակերպության ընդլայնմանը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

1. Saudi MBS on BRICS leaders calling him to abandon U.S. dollar in oil transactions. (26.04.2024), https://www.tacticalreport.com/daily/62696-saudi-mbs-on-brics-leaders-calling-him-to-abandon-us-dollar-in-oil-transactions

2. Доля БРИКС в мировом ВВП достигла рекордных 35,7. (03.07.2024), https://rg.ru/2024/07/03/dolia-briks-v-mirovom-vvp-dostigla-rekordnyh-357.html

3. What is BRICS, which countries want to join and why? (22.08.2023), https://www.reuters.com/world/what-is-brics-who-are-its-members-2023-08-21/.

4. Dışişleri Bakanı Hakan Fidan'dan Habertürk'e açıklamalar. (24.06.2024), https://www.haberturk.com/disisleri-bakani-hakan-fidan-dan-haberturk-e-aciklamalar-3697539

5. Monica Johnson. Why Nations Are Rushing to Join BRICS+? (12.09.2024), https://infobrics.org/post/42200/

6. US envoy believes Türkiye's place is 'in the West' amid BRICS move. (12.06.2024), https://www.dailysabah.com/politics/diplomacy/us-envoy-believes-turkiyes-place-is-in-the-west-amid-brics-move

7. Murat Yeşiltaş. Türkiye’nin BRICS Üyeliği: Fırsat mı Risk mi? (07.09.2024), https://www.setav.org/turkiyenin-brics-uyeligi-firsat-mi-risk-mi